community

The New Apostolic Church around the world

04/2024/AM

Ամենասուրբ հավատը

Խմբագրական
Հիսուսը սովորեցնում է աղոթել

Ժամերգություն
Կյանքը կառուցել ամուր հիմքի վրա

Վարդապետություն
Ննջեցյալների էությունը
Պետրոսի ծառայությունը

New Apostolic Church
International

Հիսուսն աղոթել է սովորեցնում

Լուսանկարը՝ Սիջգարին Նորամաքերպան ամերիկաստան վիճակագրի

Այս տարի մենք նորից անդրադառնալու ենք հատկապես աղոթքին: Մենք ունենք այս նշանաբանը՝ ,, Աղոթելը գործում է,,:

Աշակերտները մի անգամ հարցնում են Հիսուսին՝ ,, Ինչպե՞ս պետք է աղոթենք, որ այն գործի,,: Նա բացատրում է նրանց, թե նրանք ինչպես պետք է աղոթեն, և նրանց սովորեցնում է ,,Հայր մերը,,: Այս, աղոթքը, որը գալիս է Հիսուս Քրիստոսից, մեզ համար շարունակում է մեծ կարևոր: Որպեսզի այն գործի, մենք պետք է բառերը հասկանանք: Մենք պետք է այնպես աղոթենք, ինչպես Հիսուսը սովորեցրել է մեզ: Մենք այն պետք է Հիսուս Քրիստոսի մտածելակերպով աղոթենք, այսինքն՝ ասենք ոչ միայն բառերը, որոնք սովորեցրել է Հիսուս Քրիստոսը, այլ այդ բառերով աղոթենք Հիսուսի մտածողությամբ: Մենք աղոթում ենք Աստծուն՝ մեր Հորը, ասելով՝ Թող քո կամքը լինի: Աղոթքն իսկապես արտասովոր է, քանի որ մենք հավատում ենք և գիտենք, որ Աստված ամենազոր է:

Աստված ամենազոր է, նա միշտ անում է հենց այն, ինչն ուզում է: Այսինքն՝ մենք կարիք չունենք աղոթելու, որ սիրելի Աստված անի այն, ինչ ուզում է: Նա միշտ անում է այն, ինչ ուզում է, նա ամենազոր է: Մենք չենք աղոթում, որ Աստված իր կամքը կարողանա կատարել, այլ աղոթում ենք, որ մենք կատարենք Աստծո կամքը:

Յուրաքանչյուր մարդ պետք է ինքը որոշի՝ Ես կատարում եմ Աստծո՞ կամքը, թե՞ իմ կամքը: Սա է աղոթքի իմաստը: Մենք չենք աղոթում՝ Աստված, արա այն, ինչ դու ես ուզում, այլ մենք աղոթում ենք՝ Թույլ տուր կատարեմ քո կամքը:

Սրտանց ողջույններով՝

Ձեր՝ Ժան-Լյուք Շնայդեր

Կյանքը կառուցել ամուր հիմքի վրա



Լուսանկարները՝ Յոնաս Շիենզլերի, Բերնհարդ Հոլդենների

Հուդա 20

Սիրելիներս, դուք ձեր կյանքը կառուցեք ամենասուրբ հավատի վրա և աղոթեք Սուրբ Հոգով:

Սիրելի քույր-եղբայրներ, Հոգեգալստյանը միայն Սուրբ Հոգով լցվելը չէ, որ տեղի է ունենում: Այն սկիզբն է նաև Սուրբ Հոգու ուժով առաքյալների գործունեության: Այդ ուժով Պողոսը տեղեկացնում էր Ավետարանը: Նա քարոզում էր, որ Հիսուս Քրիստոսը Մեսիան է՝ ուղարկված Աստծո կողմից, մեզ համար զոհաբերված, հարություն առած և երկինք համբարձված: Հիսուսը տեղեկացնում էր նաև, որ նա նորից է գալու և փրկելու է նրանց, ովքեր հավատում են իրեն, մկրտված են և ընդունել են Սուրբ Հոգու շնորհները: Այսպես կարող ենք ամփոփել Հոգեգալստյան քարոզը, որը Սուրբ Հոգու ուժով առաքյալի առաջին քարոզն է:

Ինչպես լսեցինք աստվածաշնչյան ընթերցումից / Գործք 2,36-43/ , այն ժամանակ երեք հազար մարդ էր այդ քարոզին հավատացել և մկրտվել: Առաջին համայնքները հաստատուն մնացին առաքյալների ուսմունքի և Ավետարանի տեղեկացման մեջ: Ժամանակի հետ հայտնվեցին

սխալ ուսմունք տարածողներ, որոնց տարածած ուսմունքը չէր համապատասխանում առաքյալների ուսմունքին: Այդ ժամանակ առաքյալներն ու մյուս պատասխանատուները, ինչպես Հուդան, ստիպված էին ասել՝ Մի լսեք նրանց, հաստատուն մնացեք առաքյալների ուսմունքի մեջ, մնացեք Ավետարանին հավատարիմ: Բավարար չէ միայն հավատարիմ մնալը, դուք պետք է ձեր կյանքը կառուցեք հավատի վրա, այսինքն՝ ձեր կյանքը պետք է ձևավորեք Ավետարանի և առաքյալների ուսմունքի համաձայն: Այսօր դա մեզ համար նույնքան կարևոր է: Այսօր ևս կան սխալ ուսմունք տարածողներ: Սուրբ Հոգու շնորհների միջոցով, որոնք մենք ընդունել ենք, ի վիճակի ենք տարբերելու ոգիներին, ճանաչելու սխալ ուսուցանողներին և խուսափելու դրանցից: Սուրբ Հոգին օգնում է մեզ դրանում՝ քարոզի, մեր հոգին խնամողների և աղոթքի միջոցով:

Այստեղ Հուդան գրում է, որ բավարար չէ առաքյալների ուսմունքին հավատալը, մենք պետք է մեր կյանքը դրա վրա կառուցենք: Սա շատ կոնկրետ նշանակում է, որ Ավետարանը, առաքյալների ուսմունքը պետք է որոշիչ լինեն մեր առօրյա կյանքի որոշումներում: Վտանգը մեծ է, որ հավատը միայն տեսականորեն կմնա: Մենք նորառաքելական ենք, հավատում ենք Ավետարանին և առաքյալների ուսմունքին: Իսկապես, մենք անում ենք այն, ինչ ուզում ենք: Դա վտանգավոր է մեր փրկության համար: Դրա համար էլ Սուրբ Հոգին մեզ ասում է՝ ուշադիր եղեք, բավարար չէ միայն հավատալը, այլ այդ հավատը պետք է ինչ-որ բան առաջ բերի: Եթե դա այլևս այդպես չէ, ապա դրա համար կարող են տարբեր պատճառներ լինել: Ես ցանկանում եմ դրանից երկուսը նշել՝ կարող են հիասթափված լինել, քանի որ այն բանին, ինչին հավատացել են, այնպես չի ստացվել և ամեն ինչ այլ կերպ է եղել: Կամ անվստահ են դարձել, քանի որ երևույթները փոխվել են, և այլ բաներ են քարոզվում: Հարց են տալիս իրենց՝ եթե դա այլևս ճիշտ չէ, ապա ինչու պետք է մնացածը ճիշտ լինի: Դա ֆենոմեն է, որը ես ընդունում եմ: Որոշ քույր-եղբայրներ անվստահ են դառնում, երբ ամրագրում են, որ առաջ ինչ-որ բան էր ուսուցանվում, իսկ հիմա այլ է:

Այսօրվա համար պատգամը Հուդան ներկայացնում է այս կետով՝ կառուցեք ձեր կյանքը ձեր ամենասուրբ հավատի վրա: Մենք պետք է հիմնվենք սուրբ հավատի վրա: Սուրբ հավատն այն է, որն անմիջապես բխում է Հայր Աստծուց, Սուրբ Հոգուց և Հիսուս Քրիստոսից: Ինչու՞ եմ ես սա ասում: Քանի որ մեր անհատական հավատը բազմազան է: Այն ամենից առաջ հիմնվում է Աստվածաշնչի, Ավետարանի, առաքյալների ուսմունքի վրա՝ աստվածաշնչյան իմաստով, ոչ թե այսօրվա քարոզի, այլ բանի վրա, թե ինչպես են այն ժամանակվա առաքյալները Ավետարանը քարոզել և գրի առել: Սա է մեր հավատի բազիսը: Սրան մի բան էլ է ավելանում՝ ամենից առաջ մեր դաստիարակությունը: Մեզնից շատերը դաստիարակվել են նորառաքելական ուսմունքի համաձայն, մեր ծնողները, նախնիները, սպասավորները մեզ տվել են խորհուրդներ և ցուցումներ, թե ինչպես պետք է վերաբերել զոհաբերությանը, որպեսզի օրհնվեն, ինչպես պետք է վերաբերել աղոթքին, որ օրհնվեն, ինչպես պետք է իրենց պահեն: Սա մի ամբողջական շարք է, որոնք մենք ստանում ենք մեր դաստիարակության միջոցով:

Ձեր կյանքը կառուցեք ամենասուրբ հավատի վրա

Հետո մենք հասունանում ենք ու մեծանում, ձեռք ենք բերում փորձառություններ և ամրագրում, որ, եթե երևույթներն այս ձևով ենք ընդունում և այդ ճանապարհով գնում, ապա սիրելի Աստված պատասխանում է և օգնում: Սա շատ գեղեցիկ բան է, հարստություն է: Դրանից բացի, մեր հավատը հիմնվում է այն բազմաթիվ քարոզների վրա, որոնք մենք լսել ենք այս բոլոր տասնամյակների ընթացքում: Դրանց շարքին է պատկանում նաև աստվածաշնչյան խոսքերի ու դրվագների ընթերցումները, որոնք մեզ հարազատ են, որոնք պարզապես մեզ են պատկանում: Այն պատմությունները, որոնք մենք լսել ենք, կազմում են մեր հավատի մասերը, և դա ևս շատ գեղեցիկ է: Դա պատկանում է մեր հավատի շտեմարանին:

Ի վերջո դրան են պատկանում այս խոսքերը՝ Մի անհանգստացիր, դու կառողջանաս, սիրելի Աստված կօգնի: Կարելի է շատ պատմել այն մասին, թե ինչքան հաճախ են այդպիսի խոսքեր ասվում: Ապրել ենք այն պահերը, երբ առաքյալը կամ քարոզիչը ասել են բաներ, որոնք կատարվել են մեզ հետ: Մենք հավատացել ենք և աղոթել, և սիրելի Աստված օգնել է: Սա է մեր հավատի ողջ կառույցը: Սակայն, այն չի հավասարեցվում ամենասուրբ հավատին, քանի որ այն ամենին, որ գալիս է Աստծուց, խառնվում է այն, ինչը գալիս է մարդուց: Ես ամենևին չեմ ուզում դա արժեզրկել, դա շատ արժեքավոր է, բայց պետք է ամրագրել, որ դա ոչ ամենուր և ոչ բոլորի համար է արժեքավոր: Դա

ինքներս ենք նկատում: Հինգ անգամ մենք անում ենք նույն ձևով և ստացվում է, բայց վեցերորդ անգամ չի ստացվում: Ինչու՞: Ինչ-որ բան են խոստանում մեզ, մենք հավատում ենք դրան, մենք աղոթում ենք, ամեն ինչ անում ենք, ինչ մեզ ասում են, բայց խոստացվածը չի կատարվում: Որոշ երկրներում երևույթներն այսպես են, մյուսներում՝ այլ կերպ: Սակայն, Աստծո խոսքը միշտ և ամենուր արժեքավոր է: Այստեղ Հուդան մեզ խորհուրդ է տալիս, որ կենտրոնանանք ամենասուրբ հավատի վրա, այն բանի վրա, ինչը գալիս է Աստծուց, և ինչը քեզ և Աստծո ամբողջ ժողովրդի համար միշտ և ամենուր արժեքավոր է, այն է՝ Ավետարանը, Հիսուս Քրիստոսի ուսմունքը, որը քարոզվում է առաքյալների կողմից:

Մեր հավատի այս հիմնական բաղադրիչները ամփոփվում են մեր հավատամքում, հավատամքի տասը դրույթներում: Դա հանդիսանում է մեր սուրբ հավատը: Մենք հավատում ենք Աստծուն՝ ամենազոր Արարչին: Նրա համար անհնար ոչինչ չկա,նա անում է հենց այն, ինչը նրա կամքն է: Մենք հավատում ենք Հիսուս Քրիստոսին: Մենք հավատում ենք, որ նա ուղարկվել է, հավատում ենք նրա մահվանը, նրա հարությանը, նրա երկինք համբարձվելուն, նրա գալստյանը և նրա ուսմունքին: Նա Աստծուն այնպես է բացահայտում, ինչպիսին որ նա կա՝ Աստված սեր է, նա ուզում է մարդկանց փրկությունը: Դրան ենք հավատում մենք: Մենք հավատում ենք Սուրբբ Հոգուն, որի միջոցով Աստված ներկա է երկրի վրա: Չենք կարող նրան տեսնել, բայց կարող ենք նրա ներգործությունը հասկանալ:

Մենք հավատում ենք հավիտենական կյանքին: Փրկությունը, որը Աստված մեզ տալիս է, դա մարդկանց հավիտենական միասնությունն է Աստծո հետ: Մենք կարող ենք դրան հասնել որպես առաջնեկներ, և արդեն Քրիստոսի գալստյան ժամանակ հասնել փրկության և հավիտենական կյանքի՝ խաղաղության թագավորությունում: Հետո բոլոր մարդիկ, ովքեր կփրկվեն, կապրեն նոր արարչագործությունում՝ Աստծո հետ հավիտենական միասնության մեջ: Իսկ մենք հավատում ենք, որ մենք կարիք ունենք Քրիստոսի եկեղեցու, որպեսզի հասնենք այդ փրկությանը: Դա անխուսափելի է: Մենք կարիք ունենք եկեղեցական խորհուրդների, մենք կարիք ունենք Հիսուս Քրիստոսի կողմից ուղարկված առաքյալների, և կարիք ունենք պաշտոնների, որոնք ընտրված են Աստծո կողմից և կազմում են առաքյալների լիազորության մասը: Դա մեր ամենասուրբ հավատն է: Դրանում վերջին տարիներին ընդհանրապես ոչինչ չի փոխվել: Այն վավերական է ամբողջ աշխարհում՝ Աֆրիկայում, Ամերիկայում, ամենուր:

Աստված սեր է, նա ուզում է մարդկանց փրկությունը

Եկեք մեր կյանքը այս հիմքի վրա կառուցենք: Եկեք հավատը, որի բաղադրիչները կրճատեցի մինչև հինգը, համապատասխանեցնենք մեր առօրյա կյանքի որոշումներին: Ի՞նչ է դա նշանակում: Առաջինը, որ Հիսուս Քրիստոսի խոսքն ինձ համար միշտ ավելի շատ կշիռ ունենա, քան այն, ինչ մարդիկ ասում են ինձ: Ես վստահում եմ Աստծո ամենազորությանն ու սիրուն, ինչ էլ որ լինի: Եթե խոսքը սրա մասին է, ապա առօրյա կյանքում շատ արագ կոնկրետ որոշումներ պետք է կայացնել:

Հավիտենական կյանքի հանդեպ հավատն ունենում է այն հետևանքը, որ Աստծո հետ հավիտենական կյանքը նրա արքայությունում ինձ համար ամենակարևորն է դառնում: Այն միշտ առաջնայնություն ունի: Սակայն, արդեն այսօր ես ուզում եմ Հիսուսի մոտ և հետ լինել, նրա հետ միասնություն ունենալ: Դա է վճռում իմ կյանքում կայացվող որոշումները:

Եթե ես հավատում եմ Հիսուսին, ապա ինձ համար որպես հետևանք շատ կարևոր է Աստծո և մերձավորի հանդեպ սիրո պատվիրանին հետևելը: Ես դա հաճախ եմ ասել, բայց դա շատ կարևոր է `Աստծուն սիրելը նշանակում է, որ ես ամեն ինչ, որ անում եմ Աստծո համար, նրա հանդեպ սիրուց ելնելով եմ անում, ոչ թե՝ հաշվենկատորեն: Ես անդրադառնում եմ բարի խորհուրդներին, որոնք տրվել են մեզ: Այդ ամենը լիովին կարգին է: Երբեմն ես փոքր խնդիր եմ ունենում այն փաստում, որ դրա հետևում կրկին մի քիչ հաշվենկատություն եմ նկատում՝ օրինակ, եթե դու սա անես, ապա սիրելի Աստված քեզ դա կտա: Բայց, դա սեր չէ: Մենք պետք է աճենք սիրո մեջ և սիրենք այնպես, ինչպես սիրել է Հիսուս Քրիստոսը՝ առանց հաշվենկատության: Երբ մենք սիրելի Աստծո համար ինչ-որ բան ենք անում, պահում ենք նրա պատվիրանները, ծառայում ենք նրան, ապա միայն մի պատճառով՝ որովհետև նա մեզ սիրում է, որովհետև նա մեզ այնքան շատ է տալիս, մեզ այնքան շատ է տվել և մեզ այնքան շատ է տալու: Այդ սերը պետք է վճռի մեր կայացրած որոշումները: Այստեղ դեռ բարելավման տեղ:

Ես հստակ սիրում եմ իմ մերձավորին: Նաև մերձավորի հանդեպ սերը պետք է շատ կոնկրետ վճռի առօրյա կյանքում կայացրած մեր որոշումները:

Շրջանային առաքյալ Էդի Իսնուգրոհո

Շրջանային առաքյալներ ձախից աջ՝ Ռայներ Շթորք, Կուկուբա Սոկո, Միխայել Դեփփներ, Փեթեր Շուլթե և Միխայել Էրիշ

Շրջանային առաքյալ Էնրիքվե Մինիո

Երբեմն այդ սերը լինում է միայն տեսական՝ շատ խոսքեր, բայց, ցավոք, քիչ գործեր: Աֆրիկայում այս առումով կա մի գեղեցիկ պատմություն՝

Մի հոգևորական հարցնում է մի տղամարդու՝,, Դու իսկապես սիրու՞մ ես քո մերձավորին,,: ,,Իհարկե,,- պատասխանում է տղամարդը: Այսինքն՝, եթե դու երկու տուն ունենաս, մեկ տունը կտա՞ս մի աղքատի,,: ,,Այո, ես սիրում եմ իմ մերձավորին,,: ,, Եթե դու երկու ավտոմեքենա ունենաս, մեկը կտա՞ս մի աղքատի,,: ,,Այո, իհարկե, չէ՞ որ ես սիրում եմ իմ մերձավորին,,: Երբ հոգևորականը տղամարդուն հարցնում է՝,,Եթե երկու վերարկու ունենաս, մեկը կտա՞ս մի աղքատի,,: Պատասխանն այնպես է հնչում՝ ,,Ոչ,,: ,,Ինչու՞ ոչ,,-հարցնում է հոգևորականը: Տղամարդը պատասխանում է՝,, որովհետև ես արդեն երկու վերարկու ունեմ,,:

Մի փոքրիկ պատմություն Աֆրիկայից, բայց շատ բան ասող: Այս առումով ավելին ես չեմ ցանկանում ասել: Ես խնդրում եմ ձեզ- և ներառում եմ նաև ինձ- սա պարզապես ընդունեք՝ խոսքեր, սակայն նաև շատ կոնկրետ գործեր: Ամենասուրբ հավատին է պատկանում այն, որ մենք հավատում ենք, որ Հիսուսը մեզնից սպասում է այն, որ սիրենք Աստծուն ամեն ինչի վեր, և սիրենք մերձավորին այնպես, ինչպես ինքներս՝ մեզ: Սա պետք է կոնկրետ գործ դառնա:

Մի վերջին կետ՝ մենք հավատում ենք, որ փրկության հասնելու համար եկեղեցին, առաքյալների ծառայությունը, եկեղեցական խորհուրդները, պաշտոններն անխուսափելի են: Քույրեր և եղբայրներ, մենք պետք է մեկընդմիշտ

Գլխավոր առաքյալ Ժան-Լյուք Շնայդերը Հոգեգալստյան ժամերգության ժամանակ Լյուցեռնում/ Շվեյցարիա/

որոշում կայացնենք, որ եկեղեցին ամենից առաջ մեր փրկության համար է: Իհարկե, առկա է նաև նյութական գործոնը՝ շինարարություն, կազմակերպություն, տարբեր միջոցառումներ: Այդ ամենը կարգին է և կարևոր: Բայց, եթե մենք պատկանում ենք այդ եկեղեցուն, գնում ենք ժամերգությունների և կազմում ենք համայնքի մի մասը, ապա ամենից առաջ նրա համար, որ դա անհրաժեշտ է մեր փրկության համար: Մնացած ամեն ինչ պարզապես երկրորդական է: Երկրորդական բաների վրա բարկանալը չպետք է հանգեցնի նրան, որ ես դադարեմ այլևս եկեղեցի գալ: Եկեղեցին ինչ-որ կազմակերպություն չէ կամ մի գեղեցիկ միություն: Այն ինձ տրվել է Աստծո կողմից, որպեսզի ես կարողանամ փրկվել: Դա է մեր հավատը, այդ պետք է մենք պահենք: Այդ հավատը պետք է վճռիի մեր որոշումները: Եկեք հավատամքը դարձնենք մեր հավատի ամենասուրբ մասը: Մնացած ամենը գեղեցիկ է, կարևոր և արժեքավոր: Սակայն դա չպետք է հավասարեցնել ամենասուրբ հավատին: Սրա վրա մենք պետք է կենտրոնանանք:

Սիրելի Աստված այս հարցում օգնում է մեզ և դրա համար գեղեցիկ միջոց է մեր ձեռքը տալիս՝ աղոթքը: Այստեղ գրված է՝ …և աղոթեք Սուրբ Հոգով: Ինչու՞: Քանի որ դա փոխկապակցված է՝ որպեսզի այս մեկն անենք, մենք պետք է նաև մյուսն անենք: Այստեղ սիրելի Աստված օգնում է մեզ, եթե մենք նրան աղոթում ենք Սուրբ Հոգով, կենտրոնանում ենք ամենասուրբ հավատի վրա և կառուցում: Ամենազոր Աստվածն է, սիրո Աստվածն է, որ ամենից առաջ ուզում է մեր փրկությունը: Եթե մենք աղոթում ենք նրան, Սուրբ Հոգին մեզ ասում է՝ մի մոռացիր, թե ինչ է քեզ համար Աստված արել, ինչ է քեզ համար անում, ինչ է քեզ համար անելու: Դրանով շատ բան արված կլինի: Սուրբ Հոգին ասում է մեզ, որ մենք պետք է կենտրոնանանք հավիտենական կյանքի վրա: Երբ մենք Սուրբ Հոգով ենք աղոթում, մեր աղոթքը բովանդակում է ամենից առաջ հետևյալը՝ սիրելի Աստված, ուժեղացրու իմ հավատը, օգնիր անհավատիս, ուժեղացրու իմ սերը քո հանդեպ, ուժեղացրու իմ սերը մերձավորի հանդեպ:

Մենք աղոթում ենք մեր մերձավորի համար ամենից առաջ հանուն նրա փրկության՝ սիրելի Աստված, օգնիր գործիք լինելու քո ձեռքին, որպեսզի ես կարողանամ օժանդակել մարդկանց փրկությանը: Մենք սիրելի Աստծուն չենք գրում, թե նա ինչ պետք է անի մեր մերձավորի համար, բայց մենք խնդրում ենք նրան, որ նրան օգնի՝ հասնելու փրկության: Վերջին խնդրանքը, որ մենք Սուրբ Հոգով ներշնչված ասում ենք Աստծուն, այսպես է հնչում՝ Տեր, շուտ արի: Սա է այսօրվա պատգամը: Մենք պետք է մեր հավատի հիմնական բաղադրիչների վրա կենտրոնանանք: Դրանք պետք է որոշեն մեր կյանքը և մեր որոշումները: Աստծո մոտ օգնություն ենք գտնում նրանով, որ աղոթում ենք Սուրբ Հոգով: Կարո՞ղ եմ մի ցանկություն արտահայտել: Լավ կլիներ, որ հաջորդ ժամերգությունների ժամանակ ծառայողները այս մտքերը մեկ անգամ ևս արձանագրեին և շարունակեին մշակել, անգամ, եթե դրանք գրված չեն „Հիմնական մտքերում„: Ես շատ կուզենայի, որ այս պատգամը իսկապես ներգործեր:

Հիմնական մտքեր

- Առաքյալները քարոզում են Ավետարանը Սուրբ Հոգու ուժով:
- Մենք հավատում ենք նրանց ուսմունքին և մեր կյանքը կառուցում ենք դրան
- Առաջնորդվելով Սուրբ Հոգով, մենք գովաբանում ենք Աստծուն, խնդրում ենք նրա ողորմածությունը, բարեխոսում ենք եկեղեցու համար և աղաչում ենք Տիրոջ գալուստը:

Ժամերգություն գլխավոր առաքյալի հետ Հայաստանում

Լուսանկարները Հայաստանի ՆԱԵ

Գլխավոր առաքյալ Ժան-Լյուք Շնայդերը ծառայում է Հայտնությունից վերցրված աստվածաշնչյան խոսքով

Ժամերգության ընթացքում

Հուլիսի 19-ին մեր գլխավոր առաքյալ Ժան-Լյուք Շնայդերը այցելեց Հայաստան: Դա գլխավոր առաքյալի երկրորդ այցն էր, առաջին այցը եղել էր 2015 թվականի օգոստոսի վերջին: Դրանից հետո սկսվում է Կորոնայի ճգնաժամը և սահմանափակումների պատճառով ոչ մի այց տեղի չի ունենում, դրա համար էլ այս այցին Հայաստանի նորառաքելական եկեղեցու հավատացյալ քույր-եղբայրները երկար և անհամբերությամբ էին սպասում: Գլխավոր առաքյալի յուրաքանչյուր այց մեծ օրհնություն է ոչ միայն հավատացյալ քույր-եղբայրների, այլ ամբողջ երկրի համար: Գլխավոր առաքյալին ուղեկցում էին շրջանային առաքյալ Շթեֆան Փյոշելը, առաքյալ Ռենե Ֆոլլմաննը, առաքյալ Վասիլիո Կոնեն Ռումինիայից և շրջանային առաքյալ Յուրգ Ցբինդենը Շվեյցարիայից:

Նախապես մեր հոգևոր սպասավորների այցի այլ պլան կար մշակված, բայց տեխնիկական պատճառներով ամեն ինչ փոխվեց և գլխավոր առաքյալի Հայաստանում մնալու օրերը կրճատվեցին: Խնդիրը կայանում էր նրանում, որ այցից մի քանի շաբաթ առաջ Լոռու մարզում ավերիչ ջրհեղեղ տեղի ունեցավ, և այն հյուրանոցի առաջին հարկը, որտեղ պլանավորված էր գլխավոր առաքյալի մնալը, ամբողջովին մնացել էր ջրի տակ: Իհարկե, դա չխանգարեց տպավորիչ ժամերգություն տոնելուն: Վանաձոր քաղաքի ,,Մարսել,, մեծ ու լուսավոր տոնական սրահում անցկացվեց ժամերգությունը: Հայաստանի ութ համայնքների ավելի քան երեք հարյուր քույր-եղբայրներ հավաքվել էին այդ սրահում: Նրանք մեծ ուշադրությամբ վայելեցին գլխավոր առաքյալի, շրջանային առաքյալներ Շթեֆան Փյոշելի և Յուրգ Ցբինդենի քարոզները: Ի դեպ, մեր նորանշանակ շրջանային առաքյալ Շթեֆան Փյոշելն առաջին անգամ էր Հայաստանում:

Մեր գլխավոր առաքյալը մասնակիցներին ծառայեց Աստվածաշնչի Հայտնության 22,20-ում գրված

Սպասավորների սենյակում ժամերգությունից առաջ

Զոհասեղանի մոտ ծառայում է շրջանային առաքյալ Շթեֆան Փյոշելը

Զոհասեղանի մոտ ծառայում է շրջանային առաքյալ Յուրգ Յբինդենը Շվեյցարիայից

Երևանի համայնքի կանանց երգչախումբը կատարեց շատ երգեր, այդ թվում նաև՝ հայկական ֆոլկլորային երգեր

խոսքով՝ ,, Ով այս մասին վկայեց, ասաց՝ ,, Ես գալիս եմ շուտով,,: Ամեն: Եկ, Տեր Հիսուս Քրիստոս,,:

Գլխավոր առաքյալի քարոզը այնքան բովանդակալից և հասկանալի էր, որ հավատացյալ քույր-եղբայրները մինչև վերջ մեծ հետաքրքրությամբ լսեցին: Գլխավոր առաքյալ Ժան-Լյուք Շնայդերը շեշտեց, որ մենք իսկապես դժվար ժամանակներ ենք ապրում և կան շատ վտանգներ, որոնք կարող են թուլացնել հավատը: Ուստի, մենք պետք է անպայման ամուր պահենք հավատը Հիսուս Քրիստոսի, նրա գալստյան հանդեպ: Շատերն այնպես են մտածում, որ ժամանակն անցնում է, բայց նա դեռ չի գալիս, դրա համար էլ սկսում են կասկածել: Բայց մենք պետք է համբերատար լինենք, քանի որ մեր սիրելի երկնային Հայրը մեզ հնարավորություն է տալիս լավ նախապատրաստվելու նրա գալստյանը և որքան հնարավոր է կատարյալ դառնալու: Պարզ է, որ ոչ մի մարդ ի վիճակի չէ պահանջված կատարելության հասնել: ,, Դրա համար էլ մենք պետք է ամեն ինչ անենք, որ արժանանք ողորմածության, որն անխուսափելի է մեր փրկության համար: Վերջում Հիսուսն ինքը կչափի մարդկանց սիրո հասունությունը Աստծո և մերձավորի հանդեպ: Միաժամանակ Հիսուսը չի սպասելու իր գալուստն իրականացնելու համար, մինչև բոլորը պատրաստ լինեն դրան: Քո առաջադրանքն է մնացած ժամանակը քո նախապատրաստության համար օգտագործելը,,- այսպես հորդորեց գլխավոր առաքյալը հավաքված հավատացյալներին: Քարոզում գլխավոր առաքյալը հիշեցրեց այն մասին, որ միայն Աստված գիտի գալստյան ժամանակը, իսկ այդ ժամանակը կախված չէ նրանից, թե ինչ է տեղի ունենում երկրի վրա: ,, Աստված չպետք է ապասի, որ աշխարհում կամ եկեղեցում փոփոխություն լինի, որպեսզի ուղարկի իր Որդուն: Միայն նա ինքն է որոշում ժամանակը,,: Աստված ուզում է փրկել բոլոր մարդկանց: Դրա համար Հիսուսը դառնում է յուրաքանչյուր հավատացյալի առանձին և դրանով ցույց է տալիս, որ նրան սիրում է այնպես, ինչպիսին որ նա կա: ,, Նա քեզ ոչ մոռացել է , ոչ էլ՝ մերժել: Նա ցանկանում է, որ դու հավերժ նրա մոտ լինես,,: Դրա համար էլ մենք պետք է մեր կյանքը Հիսուս Քրիստոսի Ավետարանի համաձայն ձևավորենք և ամեն ինչ անենք ոչ միայն մեր փրկության, այլ նաև մերձավորի փրկության համար: Սա շատ

Սուրբ Հաղորդություն ննջեցյալների համար՝ եպիսկոպոս Ռաֆայել Մովսեսյանը և ավետարանիչ Նարեկ Խանվելյանը ընդունում են նշխարները որպես ննջեցյալների ներկայացուցիչներ

Աղջիկների երգչախումբը Գյումրիի համայնքից

կարևոր է մեր հավատի նպատակին հասնելու համար։ ,, Մենք հավատում ենք նրա գալստյանը, համբերատար սպասում ենք դրան և ակտիվորեն նախապատրաստվում ենք դրան,,- այսպիսին էին գլխավոր առաքյալի ամփոփիչ խոսքերը։

Ժամերգության հիմնական մտքերը մեկնաբանեցին շրջանային առաքյալներ Շթեֆան Փյոշելը և Յուրգ Ցբինդենը։ Հետաքրքիր օրինակներով սպասավոր եղբայրները շեշտեցին Հիսուս Քրիստոսի գալստյանը նախապատրաստվելու կարևորությունը։ Նրանք քարոզում անդրադարձան նաև աստվածային սիրուն՝ Աստված սեր է, նա սիրում է բոլոր մարդկանց, նրա ցանկությունն է, որ բոլոր մարդիկ փրկվեն։ Մենք բոլորս պետք է այդ սիրուն համապատասխան արձագանք տանք, Աստծո խոսքը կիրառենք, սիրո երկու պատվիրանները պահենք՝,, Դու պետք է Տիրոջը՝ քո Աստծուն սիրես ամբողջ սրտով, ամբողջ հոգով և ամբողջ մտքով։ Դու պետք է սիրես քո մերձավորին, ինչպես ինքդ՝ քեզ,,։

Վանաձորի համայնքից մի պատանի երաժշտական մի հատված է կատարում դուդուկով՝ հայկական ավանդական սրինգով



Համայնքի հետ Սուրբ Հաղորդությունը տոնելուն զուգահեռ գլխավոր առաքյալը Սուրբ Հաղորդությունը տոնեց նաև ննջեցյալների համար։ Մահացածների համար նշխարներն ընդունեցին եպիսկոպոս Ռաֆայել Մովսեսյանն ու ավետարանիչ Նարեկ Խանվելյանը։

Վերջում պատանիներից մեկը դուդուկով նվագեց երաժշտական մի հատված։

Ժամերգության ժամանակ համայնքը երգում էր դաշնամուրի ուղեկցությամբ։ Երևանի համայնքի կանանց երգչախումբը ներկայացրեց շատ երգեր, այդ թվում նաև հայկական։ Նրանց պրոֆեսիոնալ կատարումները դուր եկան մեր հարգելի հյուրերին, բոլոր ունկնդիրներին։

Մեր գլխավոր առաքյալ Ժան-Լյուք Շնայդերը շնորհակալություն հայտնեց ոչ միայն գեղեցիկ երաժշտության համար, այլ նաև բոլոր քույր-եղբայրների ներկայության համար։ Հրաժեշտի պահին բոլորը ծափահարեցին գլխավոր առաքյալին և նրան ուղեկցողներին։ Հայաստանի Նորառաքելական եկեղեցու հավատացյալ քույր-եղբայրների համար դա իսկապես մի առանձնահատուկ օր էր։

Երեկոյան գլխավոր առաքյալն իր ուղեկիցների հետ ճանապարհվեց դեպի Վրաստան, որպեսզի Թբիլիսիում ևս մեկ ժամերգություն տոնի։

ԴԱՎԻԹԸ ՆՎԱԳՈՒՄ Է ՍԱՎՈՒՂԻ ՀԱՄԱՐ

ԸՍՏ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ 16-20-Ի

Սավուղ թագավորը մեղք էր գործել: Նա նկատում է, որ Աստված այլևս իր կողքին չէ: Աստված մի նոր թագավոր էր փնտրում: Սավուղը վախենում է և վատ տրամադրվում: Նրա ծառաները փնտրում են մեկին, ով կարողանա տավիղ նվագել, որպեսզի քաջալերի թագավորին: Ինչ որ մեկը նրանց պատմում է Դավթի մասին, և այսպես Դավիթը գալիս է թագավորի պալատ:

Ամեն անգամ, երբ Սավուղ թագավորը վատ տրամադրություն է ունենում, Դավիթը նրա համար տավիղ է նվագում ու քաջալերում նրան: Թագավորին Դավիթը դուր է գալիս:Ապա Դավիթը հաղթում է հսկա Գողիաթին: Սավուղ թագավորը խանդում է և նախանձում Դավթին, քանի որ նա լավ մարտիկ էր, իսկ՝ իսրայելացիներն ասում են՝ ,, Սավուղը հազարին է սպանում, իսկ Դավիթը՝ տասը հազարի,,: Դավիթը նոր հերոս էր և մարդիկ նրա ավելի էին սիրում, քան թագավորին: Բացի այդ, Աստված Դավթին էր ընտրել որպես Սավուղի հետնորդ:





Սավուղն ավելի էր բարկանում, և մի օր չարությամբ լի մի սուր է նետում Դավթի վրա: Երկու անգամ Դավիթը խույս է տալիս սրից: Սակայն Սավուղն ուզում էր սպանել Դավթին:

Ջոնաթանը՝ Սավուղի որդին, Դավթի համար խոսում է իր հոր հետ՝,, Նա միշտ կռվել է քեզ համար, նա հաղթել է հսկա Գողիաթին, նա երբեք քեզ ոչինչ չի արել, ինչու՞ ես ուզում անմեղին սպանել,,: Սավուղը խոստանում իր որդուն, որ Դավթին ոչինչ չի անի: Դավիթը նորից է հաղթանակով գալիս ճակատամարտից: Տեղի է ունենում այն, որ թագավորը մոռանում է իր խոստումը և նորից սուր է նետում Դավթի վրա այն ժամանակ, երբ նա նվագում էր իր համար: Դավիթը կարողանում է խույս տալ, սուրը խրվում է պատի մեջ:

Այդ նույն գիշեր Դավիթը փախչում է:

Աղբյուրը՝ Ամագիր՝ Մենք՝ երեխաներս, հրատարակություն 02 2024, ձևավորումը՝ Միրելա Ֆորսունատոյի

ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆ ՄԱԿԱՖՈՒԻՆ՝ ԱՔՐԱՅՈՒՄ / ԳԱՆԱ/

Բարի գալուստ Արևմտյան Աֆրիկա: Այստեղ՝ Գանայում, շատ երեխաներ անվանվում են շաբաթվա այն օրվա անունով, որ օրը ծնվել են: Օրինակ, Աֆու անվանվում է աղջիկը, ով ծնվել է ուրբաթ օրը: Իմ անունը Մահաֆուի է: Իմ անունը չի ծագել իմ ծննդյան օրվա անունից, այլ նշանակում է՝ ,, Ես ուզում եմ Աստծուն գովաբանել,,:

Այլոց թվում ես Աստծուն գովաբանում եմ երաժշտությամբ: Ես ջութակ եմ նվագում, եկեղեցու նվագախմբում եմ նվագում:

Գանայում տասը բնակիչներից մոտավորապես յոթը քրիստոնյա է: Մենք լուսանկարվել ենք մեր եկեղեցու առաջ մեր համայնքի մի քանի քույր-եղբայրների հետ միասին:

Մեզ մոտ բոլոր ինը տարեկան դարձած երեխաները պետք է գնան դպրոց: Ով դրանից հետո ցանկանա ուսումը շարունակել, պետք է ուսման համար վճարի: Բայց Գանայում յուրաքանչյուր երրորդ երեխան չի կարողանում դպրոց գնալ: Հյուսիսի գյուղերում շատ քիչ դպրոցներ կան, մեծ քաղաքներում շատ երեխաներ ապրում են փողոցներում, մյուսներն էլ ստիպված աշխատում են և օգնում ընտանիքին: Ես հաճախում եմ քրիստոնեական դպրոց և կիրակնօրյա դպրոց:

Ֆուտբոլը մեզ մոտ մեծ դեր ունի: Ես էլ եմ խաղում ֆուտբոլ, բարեբախտաբար ես կարողանում եմ միշտ խաղալ իմ եղբայրներից մեկի հետ: Եթե ես դրսում չեմ լինում, խաղում եմ համակարգչային խաղեր:

Իմ ընտանիքը՝ այստեղ իմ մայր Գիֆթին է, իմ հայր Դավիթը, իմ եղբայրներ Սելասեն /15/ և Էիրամը/13/ են ու ես: Ես տասնմեկ տարեկան եմ: Իմ ծնողներն աշխատում են որպես վարչական ադմինիստրատոր և գործադիր տնօրեն:

Մենք ապրում ենք Աքրայում, այն մեր երկրի ամենամեծ քաղաքն ու միաժամանակ մայրաքաղաքն է: Աքրան գտնվում է հենց ծովի ափին:

Գանացիները մեծամասամբ ուտում են տաք ուտեստներ, նաև՝ նախաճաշին: Իմ սիրելի ուտեստը խոզի մսով կոտլետն՝ սառեցրած յամի արմատներով: Այն մեզ մոտ տանը ժամանակ առ ժամանակ լինում է:



Գանան անկախացավ 1957 թվականին: Առաջին նախագահի անունը Կվամե Նկրումահ էր: Աքրա քաղաքի կենտրոնում նրա անունով զբոսայգի է հիմվել: Նա այդտեղ է թաղված, և նրա հիշատակին հուշարձան կա կառուցված: Անկախության օրը մեծ տոնակատարությամբ է նշվում: Շուտով կնշվի այդ տոնը՝ մարտի 6-ին:

Աղբյուրը՝ Ամագիր՝ Մենք՝ երեխաներս, հրատարակություն 02 2024; լուսանկարները՝ վասավոր; stock.adobe: malajscy; Alekss; Sura Nualpradid; Diversity Studio

Մտքեր ննջեցյալների էության վերաբերյալ

Ինչպիսի՞ն է անդրշիրիմյան աշխարհի մարդկանց իրավիճակը: Ի՞նչ փրկություն է առաջարկվում ննջեցյալներին, ե՞րբ և ինչպե՞ս: Նորառաքելական հավատից բխող պատասխանները տալիս է գլխավոր առաքյալի այս շրջաբերականը:

Սուրբ Հոգին գործում է այսօրվա առաքյալների մրջոցով նույն ձևով: Համաձայն այն առաջադրանքի, որը նրանք ստացել են իրենց ուղարկողից, նրանք բոլոր մարդկանց տեղեկացնում են, որ Աստված իրենց փրկությունն է ուզում, և, որ նա միակ ճանապարհն է դրան հասնելու համար, դրա համար պետք է Հիսուս Քրիստոսին հավատալ և հետևել: Այն բանից հետո, երբ Հիսուսը հաղթեց մահին, տվեց փրկության պատգամը ինչպես ողջերի, այնպես էլ մահացածների համար / Պետրոս Ա 4,6/:

Սուրբ Հոգին գործում է այսօրվա առաքյալների մրջոցով նույն ձևով: Համաձայն այն առաջադրանքի, որը նրանք ստացել են իրենց ուղարկողից, նրանք բոլոր մարդկանց տեղեկացնում են, որ Աստված իրենց փրկությունն է ուզում, և, որ նա միակ ճանապարհն է դրան հասնելու համար, դրա համար պետք է Հիսուս Քրիստոսին հավատալ և հետևել: Այն բանից հետո, երբ Հիսուսը հաղթեց մահին, տվեց փրկության պատգամը ինչպես ողջերի, այնպես էլ մահացածների համար / Պետրոս Ա 4,6/:

Անդրշիրիմյան աշխարհի մարդը

Մահվան ժամանակ հոգին և ոգին թողնում են մարդու մարմինը, որպեսզի անդրշիրիմյան աշխարհ հասնեն: Մարմինը անցողիկ է, բայց մահացածի անձնականությունը մնում է: Մենք հավատում ենք, և սա նորառաքելական հավատի առանձնահատկություններից մեկն է, որ ննջեցյալները պահպանում են իրենց որոշման ազատությունը՝ նրանք կարող են ազատ որոշում կայացնել հանուն կան ընդդեմ Հիսուս Քրիստոսի:

Անդրշիրիմյան աշխարհի մարդու իրավիճակը կախված է Հիսուս Քրիստոսից հեռու կամ նրան մոտ գտնվելուց, մյուս կողմից էլ՝ մեղքի մասշտաբից, որը նա կրում է, իսկ դա միայն Աստված կարող է չափել:

Որպեսզի խոսվի այդ տարբեր իրավիճակների մասին, Աստվածաշունչն օգտագործում է տարբեր պատկերներ: Պետոսի Ա-ի 3,19-ում խոսքը գնում է անհնազանդ ոգիների մասին, որոնք գտնվում են ,,բանտում,,: Հիսուն ասում էր, որ Հոր տանը տարբեր ,,բնակարաններ,, կան/Հովհաննես 14,2/: Այս առիթով մենք խոսում ենք անդրշիրիմյան աշխարհի տարբեր ,,ոլորտների,,մասին: ,,Բանտ,, հասկացությունը, որն այս կապակցությամբ հաճախ է նշվում, բառացի չպետք է հասկանալ: Պատկերը վերաբերում է այն իրողությանը, որ այդ ննջեցյալները մնում են մեղքի գերին և դրանից էլ ի վիճակի չեն լինում Աստծուն մոտենալ: Նմանապես ,,բնակարաններ,, կամ ,,ոլորտներ,, հասկացությունները չեն նշանակում այն, որ Աստված բոլոր մահացածներին նույն ,,պրոֆիլով,, նույն ,,տեղն,, է հավաքում կամ արգելափակում՝ ստախոսներին՝ ստախոսների մոտ, մարդասպաններին՝ մարդասպանների մոտ և այլն: Աստված մարդկանց տեսակավորում է ոչ թե ըստ կատեգորիաների, այլ յուրաքանչյուրին դիտարկում է որպես յուրատեսակ անձ: Մենք կարող ենք ասել, որ ննջցյալների կարգավիճակը կախված է Հիսուս Քրիստոսի հետ հարաբերությունից և իրենց մեղքի չափից:

Փրկության առաջարկն այսօր

Այստեղ և անդրշիրիմյան աշխարհում Քրիստոսով փրկությունը ողորմածություն է, որ տալիս է Աստված, ում ուզում և երբ ուզում է: Նրանց, որոնց նա փրկություն համար է ընտրել, հնարավորություն է տալիս ճանաչելու Ավետարանը: Փրկվելու համար ննջեցյալները, ովքեր ունեն այդ ողորմածությունը, պետք է որոշեն ընդունել Ավետարանը, հավատալ Հիսուս Քրիստոսին, առաքյալների կողմից նվիրաբերված խորհուրդները ընդունել և Ավետարանին հետևել:

Հասկանանք, որ այն ժամանակը, որը ննջեցյալը անց է կացնում որևէ ,,ոլորտում,, ոչ մի ներգործություն չունի փրկության վրա: Եթե նա երկար ժամանակ ,, բանտում,, տառապել է, չի նշանակում, որ նա մեխանիկորեն փրկվում է: Որպեսզի Աստծու մոտ գնան, կա միայն մեկ ճանապարհ, այն է՝ Հիսուս Քրիստոսի հանդեպ հավատը: Խորհուրդների ընդունման ընթացքում ,, Քրիստոսը,, ննջեցյալներին ,,ազատում է,, այնպես, ինչպես՝ ողջերին է ազատում՝ ովքեր ջրով մկրտվել են և ազատվել ժառանգական մեղքից ու կարող են մոտենալ Աստծուն, ովքեր կնքվել են Սուրբ Հոգով և ստացել են հավիտենական կյանքի խոստումն ու հնարավորությունը որպես առաջնեկ Աստծո արքայություն մտնելու: Սուրբ Հաղորդության արժանապատիվ ընդունումը նրանց համար հնարավոր է դարձնում Քրիստոսի հետ միասնության մեջ լինել և Քրիստոսի պատկերի համաձայն զարգանալ:

Երբ նա նորից գա, ապա Տերը ընտրյալներին, ովքեր Սուրբ Հոգու կողմից իրենց նախապատրաստվել են տվել, այս և անդրշիրիմյան աշխարհից իր հետ է տանելու՝ Նրանց հոգին և ոգին նոր մարմին են ընդունելու՝ հարության մարմին, որով նրանք գնալու են Աստծո փառահեղություն:

Փրկության առաջարկը խաղաղության թագավորությունում

Քանի որ Աստված բոլոր մարդկանց փրկությունն է ուզում, իսկ այդ փրկությանը կարող են հասնել միայն Քրիստոսով, ապա նա յուրքանչյուր մարդու համար հնարավոր է դարձնում ազատ որոշում կայացնել կարողանալը հանուն Քրիստոսի:

Խաղաղության թագավորությունում բոլոր մարդկանց տեղեկացվելու է փրկությունը՝ ինչպես մահացածներին, այնպես էլ ողջերին: Յուրաքանչյուրը հնարավորություն է ստանալու Քրիստոսին հետևել: Այս ժամանակի վերջում չարը հնարավորություն է ունենալու մարդկանց մոլորեցնելու: Դրա համար էլ յուրաքանչյուրը գործի մասին գիտելիքներով լի՝ կարող է և պետք է որոշում կայացնել հանուն կամ ընդդեմ Քրիստոսի:.

Վերջին դատաստանի ժամանակ նրանք, ովքեր հետևած կլինեն Քրիստոսին, կգնան նոր արարչագործություն: Մյուսները վերջնականապես կբաժանվեն Աստծուց:

Մենք ևս մտածենք՝

- Երբ մարդու ճակատագիրը մահվան ժամանակ վերջնականորեն ամրագրված լիներ, մարդկության մեծ մասը Քրիստոսով փրկության հնարավորություն չէր ունենա:
- Այն ուսմունքը, ըստ որի Աստված իր մեծ բարությամբ կարող է մարդկանց փրկել՝ առանց նրանց կողմից Քրիստոսին հավատալու, անհամատեղելի է այն առաջադրանքի հետ, որը Հիսուսը տվել է իր առաքյալներին: Առաքյալները չեն կարող տեղեկացնել այն ուսմունքը, որը հակառակ կլինի Հիսուսի ուսմունքին:
- Հազարամյա խաղաղության թագավորության մասին ուսմունքը հիմնվում է այն համոզման վրա, որ Աստված ցանկանում է բոլոր մարդկանց հնարավորություն տալ փրկվելու՝ Հիսուս Քրիստոսին հավատալու միջոցով:

Լուսանկարը՝ TEERAPAT/stock.adobe

Ինչպես է Աստված պաշտպանում եկեղեցին

Սուրբ Հոգով լցվելուց հետո Պետրոս առաքյալը հանդես է գալիս որպես խոսնակ և մի քարոզ է անում, որն այնպես է ազդում 3000 մարդու վրա, որ նրանք իրենց մկրտել են տալիս: Նա գործում է այն լիազորության հիմքով, որը նրան է վերապահել Հիսուսը:

Մատթեոս 1,18,19-ում մենք կարդում ենք `,, Եվ ես քեզ ասում եմ, որ դու վեմ ես, և այդ վեմի վրա պիտի շինեմ իմ եկեղեցին, ու դժոխքի դռները այն չպիտի հաղթահարեն: Ես քեզ պիտի տամ երկնքի արքայության բանալիները, և ինչ որ մի անգամ կապես երկրի վրա, կապված պիտի լինի երկնքում, և ինչ որ արձակես երկրի վրա, արձակված պիտի լինի երկնքում,,:

Չավերվող եկեղեցին

Այստեղ Հիսուս Քրիստոսը հայտնում է, որ իր եկեղեցին չի կարող ավերվել՝ չնայած չարի ուժերի հարձակմանը, այն կանգուն է մնալու: Մենք չպետք է անհանգստանանք Քրիստոսի եկեղեցու գոյատևման համար: Ամենազորը հսկում է այն, Քրիստոսը կատարյալ կերպով կատարելու է իր գործը:

Սակայն ուշադրություն դարձնենք, որ այստեղ խոսքը Քրիստոսի եկեղեցու մասին է, և միայն նրա մասին: Հիսուսը չի խոսում եկեղեցու մասին որպես ինստիտուտի՝ իր կառուցվածքով և որպես միջոցառումների հնարավոր վայր, որոնք գիտենք մեր համայնքներից: Քրիստոսի խոսքը վերաբերում է միայն նրան, ինչը իր եկեղեցու էությունն է կազմում՝ Ավետարանի քարոզը, խորհուրդների նվիրաբերումը, ինչպես և հավատացյալների միասնությունը: Հիսուսն իր առաքյալներին Ավետարանը քարոզելու և խորհուրդները նվիրաբերելու առաջադրանք է տվել: Եկեղեցու հիմնադրման վերաբերյալ խոստումը փոխանցվում է առաքյալներին տրված խոստման հետ՝,, Եվ ահա ես ձեզ հետ եմ բոլոր օրերում՝ մինչև աշխարհի վախճանը ,, /Մատթեոս 28,20բ/:

Պատասխանատու անձի առաջնայնությունը

Քրիստոսն իր առաքյալներին կապելու և արձակելու լիազորություն է փոխանցել /Մատթեոս 18,18/: Նորառաքելական եկեղեցու դավանաբանության համաձայն՝ /ՆԱԵԴ/ 7,6,2 կետում հետևյալ ձևակերպումը կա՝ ,, առաքյալները գլխավոր առաքյալի հետ միասին ներկայացնում են եկեղեցու հոգևոր առաջնորդությունը և որոշում են համայնքային կյանքի կարգն ու կանոնները,,:

Հիսուսի կողմից եկեղեցին ղեկավարելու առաքյալներին վստահված առաջադրանքը պետք է դիտարկվի այն խոստումների լույսի ներքո, որոնք Հիսուս Քրիստոսը եկեղեցու և առաքյալների ծառայության վերաբերյալ է տվել / Մատթեոս 16,18,28,20 բ/: Պետք է ավելի շատ առաջնայնություն տալ այն բանին, ինչը մինչ Հիսուսի գալուստը կարևոր է՝ Ավետարանի տեղեկացումը, խորհուրդների



Զնավորումը՝VectorMine/stock.adobe

նվիրաբերումը և միմյանց հետ միասնությունը: Այդ առաջնայնությունները պետք է արտացոլվեն անձնական և ֆինանսական ռեսուրսների կիրառման վերաբերյալ որոշումներում:

Վեմը որպես օրինակ

Հիսուսը մի շատ որոշիչ ժամանակ Պետրոսին որպես վեմ է նկարագրում, հատկապես այս խոստովանությունից հետո՝ ,, Դու ես Քրիստոսը՝ կենդանի Աստծո Որդին,, / Մատթեոս 16,16/: Ավելի ուշ Հիսուսը Պետրոսին վստահում է իր եղբայրներին ուժեղացնելու առաջադրանքը / Ղուկաս 22,32/: Իր հարությունից հետո Հիսուս Քրիստոսը հարցնում է Պետրոսին՝,, Դու սիրու՞մ ես ինձ,,: Միայն այն բանից հետո, երբ Տերը համոզվում է Պետրոսի սիրո մեջ, նրան է վստահում իր հոտը / Հովհաննես 21, 15-17/:

Նրանով, որ Հիսուսը Պետրոսին համեմատում է վեմի հետ, ով ունակ է չարի ուժերին ընդդիմանալու, Պետրոսին դարձնում է օրինակ: Ոչինչ չի կարող մեզ բաժանել Քրիստոսից,

- եթե մենք Պետրոսի նման ամուր հավատ ունենաք Հիսուս Քրիստոսի՝ կենդանի Աստծո Որդու հանդեպ: .
- Ողջախոհ լինենք և գիտակցենք, որ փրկության համար շնորհակալ ենք լինելու Հիսուսին:,
- իսկապես լցված լինենք Քրիստոսի սիրով:

Պետրոսի ծառայությունը

Մատթեոսի 16,18-ը վերաբերում է Պետրոսի ծառայությանը, այսինքն՝ վեմի պաշտոնին՝ ,, Դրանով Աստծո Որդու կողմից ստեղծված է անքակտելի կապ վեմի պաշտոնի և նրա եկեղեցու միջև: Ժայռի պաշտոնը և Քրիստոսի եկեղեցին տրված են Հիսուս Քրիստոսով մարդկանց փրկության համար/ ՆԱԵԴ 7,6,6/: Հիսուս Քրիստոս խոստացել է հսկել իր եկեղեցին և իր առաքյալներին: Պետրոսի ծառայության հիմնումը մասն է այն միջոցառումների, որոնք Հիսուսն է իրականացնում, որպեսզի իր եկեղեցին չար ուժերից պաշտպանի:

,, Այն ծառայությունն ու առաջադրանքները, որոնք Տերը տվել է Պետրոս առաքյալին, այսօր կատարվում են գլխավոր առաքյալի կողմից: Նա գործում է առաքյալների Տիրոջ կողմից առաջարկվող միասնության համար / Հովհաննես 17,20-203/ նրանով, որ նա իր եղբայրներին, առաքյալներին ուժեղացնում է / Ղուկաս 22,23/: Նա հովվում է Քրիստոսի հոտի ,, գառներին և ոչխարներին, / Հովհաննես 21, 15-17/: Գլխավոր առաքյալի ծառայությունը դրսևորվում է ուսմունքի անաղարտ պահպանմամբ, նոր գիտելիքների, ինչպես նաև հավատի վկայությունների միասնական ձեռքբերումների տարածմամբ ու շարունակական զարգացմամբ: Գլխավոր առաքյալը հաստատում է նաև եկեղեցու կարգավորումը: Այս առաջադրանքները հանդիսանում են գլխավոր առաքյալի պաշտոնի ,, զորության բանալին,, / ՆԱԵԴ 7,6,6 /:.

Երուսաղեմում առաքյալների ժողովին Պետրոսը պահպանում է եկեղեցու միասնությունը նրանով, որ նա նրանց, ովքեր ղեկավարում են եկեղեցին, հորդորում է կենտրոնանալ էականի վրա / Գործք առաքելոց 15, 6-11/: Այսօրվա ժամանակներում գլխավոր առաքյալը հոգում է, որ առաքյալները և նրանց կողմից ղեկավարվող տարածաշրջանային եկեղեցիները,չնայած իրենց տարբեր մշակույթներին և ավանդույթներին, միասնական մնան: Նա դա անում է նրանով, որ նա գլխավոր է համարում այն, ինչն իսկապես անհրաժեշտ է փրկության համար:

Գլխավոր առաքյալը պետք է հովվի նաև Քրիստոսի հոտը նրանով, որ գործի ինչպես բարի հովիվ: Նա պետք է հոգա հատկապես այն բանի համար, որ Քրիստոսի բոլոր ոչխարները տիրապետեն այն ամենին, ինչն անհրաժեշտ է իրենց փրկության համար: Դրան հասնելու համար նա նպաստում է եկեղեցու ներսում տարբեր ոլորտների միջև համերաշխությանը:

Ինչպես մենք գիտենք,Պետրոսն ամեն ինչ էր, բայց, ոչ կատարյալ: Բայց Պետրոսի թուլությունները Քրիստոսին հեռու չեն պահում իր եկեղեցին նրա միջոցով օրհնելուց: Մենք կարող ենք վստահ լինել, որ Հիսուս Քրիստոսը՝ չնայած իր սպասավորների ոչ կատարյալ լինելուն, իր գործը առաջնորդելու է դեպի կատարելություն:

/ Գլխավոր առաքյալի շրջաբերականից/

Խմբագրական
Հրատարակիչ՝ Ժան-Լյուք Շնայդեր, Իուբերլանդսշթրասսե 243, 8051 Ցյուրիխ/Շվեյցարիա
Ֆրիդրիշ Բիշոֆֆ հրատարակչություն, Ֆրանկֆուրտյան փողոց 233, 63263 Նոյ-Իզենբուրգ/ Գերմանիա
Խմբագիր՝ Սիմոն Հայնիգեր

Տեղեկատու

13.10.2024	Սան Ֆրանցիսկո(ԱՄՆ)
20.10.2024	Գլազգո (Մեծ Բրիտանիա)
03.11.2024	Փնոմ Փեն(Կամբոջա)
05.11.2024	Սլեմ Ռիփ (Կամբոջա)
17.11.2024	Կոնակրի (Գանա)
22.11.2024	Աքրա (Գանա)
08.12.2024	Քափշթադթ (Հարավային Աֆրիկա)
15.12.2024	Օմսկ(Ռուսաստան)
22.12.2024	Բադ Քաննշթադթ(Գերմանիա)
25.12.2024	դեռ հաստատված չէ(Ֆրանսիա)
29.12.2024	Աախեն(Գերմանիա)

New Apostolic Church
International